Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ   է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 2-ի «Գերակա ոլորտում իրականացվող  ներդրումային ծրագրի շրջանակներում  ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնությունից օգտվելու համար «ՎԻՍԱՎՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 193-Ա որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետով.

«

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | 8481 80 850 8 | Փական | գնդիկավոր փական DN500 | կգ | 690 | Չեխիայի Հանրապե-տություն | 8190000 |

»: